41. ԲԱԽՏՈՎ ՄԱՐԹ

Կէլնի իրեքյ խատ երիտասարդ: Իրիյն էլ ախպերացյիր կէլնեն, կէրթա̈ն Ըստամբոլ: Ճամբախ մեյ խատ խալիվրոջմ ռաստ կուգյա̈ն:

Էն մեկ երիտասարդ կասի. - Խալիվո՛ր, տյու դե՞ր կէրթաս:

Կասի. - Ես կէրթա̈մ Ըստամբոլ:

- Որ ըդնա էի, ես քյո ոտուց խետ կուգյա̈մ:

Կասի. - Չէ՛, երիտասարդ. ես խալիվոր եմ, տյու կխասնես Ըստամբոլ, ես ա̈լա̈ Էրզրում չխասած:

Ինգյրներ կասեն. - Ախպե՛ր, քելի էրթա̈նքյ, մի մնա խետ էդա խալիվրուն:

Կասի. - Չէ՛, ես կմնամ խետ էսա մարթուն, կմեռնեմ:

Ուր ինգյերներն էլ կմնան խետ ուր:

Կէրթա̈ն մէ խատ քյոիմ ռաստ կուգյա̈ն:

Խալիվոր կասի. - Ծեզնե վո՞վ կուզի էսա քյոեն տա̈ռնա ոչխար, ուտի, խմի, քեֆ անի:

Էն մեկ ինգյեր կասեր. - Թա̈հլա տա̈ռներ, ես օր չուր իրիկուն ոչխար կթի, կաթը տի աղքտներաց՝ զիկ օխնին:

- Երիտասա՛րդ. տյու քյո խոսքի տե՞րն ես:

Կասի. - Խա՛:

Իրեքյ անգամ կկրկնի:

Համան խալիվոր ուր իրես կխաչակնքյի: Էն քյոեն ամբողջ կտու̈ռնա ոչխար:

Տղեն կմնա ուր ոչխրի մոտ, ինքյ կթողնի կէրթա̈:

Կէլնեն էրկու երիտասարդ կէրթա̈ն խետ էդա խալիվրուն:

Կէրթա̈ն մեշիմ մոտ:

Խալիվոր կասի. - Տղեյնե՛ր, ծեզնից ո՞րն կուզի էսա մեշեն տառնան եմշի ծառ, ինա̈ն խավողի թյուփ:

Էն մեկ ինգյեր կասի. - Թող տա̈ռնա խավող, ես էրթա̈ցող-գա̈ցող մարթուն ցրվեմ՝ զիկ օղորմի տին կիշեր-ցերեկ:

Խալիվորն ի իրես կտարցուցի աղոթրան, իրես կխաչակնքյի, էնտեղ կտառնա խավող, ինա̈ն եմշի ծառ:

Կասի. - Երիտասա՛րդ. խորո քյո խոսքյին տեր էլի:

Կասի. - Ես իմ խոսքյին տեր եմ:

Խալիվոր կառնի էն մեկէլ երիտասարդ, կէրթա̈: Ինոր կասի. - Էսա քյո ինգյրներ մէ՛, մէ՛, մէ՛ պա̈ն ուզիցին. ապա տյու ի՞նչ պիտի ուզես աստծուց:

Կասի. - Ես պանն չեմ ուզե աստծուց. մենակ՝ խալալակեր. խալալակաթ կնիկ:

Կասի. - Էդա քյո ուզած մեյ խա կա: Ինոնքյ էլ էրկու քյեոր են՝ թակավոր ճեռչ քեորն թողե. պստիյ նշանե ուր լաճուն:

Կասի. - Էլավ՝ թո էլնի, չէլնավ՝ թո չէլնի:

Կասի. - Իրիշկա տես. էնա դիմանցի գյեղն ի. խարսիխուր կնանց:

Խարսիխուր կէրթա. խարս կառնի, կուգյա կմտնի ժամի մեչ. ժամտան տյոտ կէլնի մեյ տակ քյար:

Խալիվորն կասի. - Երիտասա՛րդ. կնա ասա. ես էն տյուռ կպանանմ: Որ կխաոցուցեն, թե ի՞նչ կուզես քյո իրավունք, ասա՝ քյո խարս տաս զի: Սանանթ կառնես. ծեռ կուտաս. տյուռ կպանցվի:

Երիտասարդ կէրթա տռան վերեն թակավրուն կասի. - Որ քյո խարս տա զի. տյուռ կպանա: Թուկավրուց սանաթ կառնի, ծեռ կուտա տյուռ. տյուռ կպացվի:

Թակավոր կէլնի տյուս. կպիրի ճեռչ քյեոր կփսակի վեր ուր լաճուն. ուր խարս՝ պստիկ քյեոր. կուտա էդա երիտասարդին. կփսակի էրկուսն էլ, քյեռշկ-սարեմ կուտա ինոր, կանի ուր խոգյանզանվանկ:

Տառնանքյ վեր խալիվրուն:

Խալիվորն ինքյ ուր կասի. - Աստված իսոնց իտուր, ապա կայնի, մեյ խատ ես էրթամ, իսոնց փորձեմ, խենքյ իսոնքյ ուրենց խոսքի տե՞րն են:

Կէլնի յարալու, փարալու խալիվորմ կէրթա ոխչրի տիրոչ մոտ:

Կասի. - Էյ, երիտասարդ, մե կտոր թուխ մաքյու կաթ տու խմեմ. յարալու պապիկ եմ:

Երիտասարդն ի կասի. - Դե՛, տյու նստի, ես էրթամ քյե թուխ մաքյու կաթ պիրեմ:

Կէրթա մեյ խատ գյոռոտ էծու կաթ կթի, կառնի կուգյա: Կուգյա, կուտա խալիվրուն:

Խալիվորն կասի. - Էսա էծու կաթ ի, զի մի խապե:

Մարթն կաթ կթանփի, տանի մեկ էլ կպիրի:

Էն էլ գյոռոտ էծու կաթ կէլնի: Էն էլ կթանփի: Տիրմ էլ կպիրի. էն էլ ըսկուն կէլնի, էն էլ կթանփի:

Երիտասարդ կասի. - Էսա տեղ շեռքյ ի, չեորեով կաթ թանփիցիր, էլի կնա, կաթ չկա:

Կասի. - Զոր ես, չոր տանանանս:

Էն գյանխ գյինե. էն ոչխար կտանանա քյուս:

Կէլնի կէրթա էն բանչըպանի մոտ: Կասի. - Ցարալու-փարալու պապիկ եմ, մեկ ճուր արևախաս խաղող տաս զի ուտեմ, ժրեմ:

Կէրթա խավող կպիրի: Մեկ մաղ ժուռ կառնի կուգյա, կուտա խալիվրուն:

Խալիվոր կասի. - Ես էսա խավող չեմ ուտե:

Իրեքյ անգամ կպիրի, իրեանն էլ ժուռ, խալիվոր իրեյանն էլ չուտե:

Մարթն կասի խալիվրուն.

- Էլի կնա, ընանա տեղ մարթու ծեռ չեորեով խավող կիյնի էն էլ տյու կթանփես:

Կասի. - Զոր ես, չոր տանանաս:

Էն էլ կչորնա:

Կէրթա մեկէլ կնգյա տերոչ մոտ: Կնստի ճանմբանխ, նախրորթմ կէօրեոխկի, կասի. - Կնա ֆիլան երիտասարդին ասա՝ խալիվորմ իկե. քյե կկանչի:

Կէլնի նախրորթ կէրթա կասի:

Կասի. - Վա՜խ. ես իմ պապիկ մոռացեր ի:

Կէլնի կուգյա խալիվորոչ մոտ:

Կուրախնա վեր ուր պապկեն:

Պապիկն կասի. - Դե՛, զի շլկի տար քյո տուն:

Կշլկի ճամբախ. գյետի մեչեն կընցուցի:

Խալիվրու քյթից ճյուր կուգյա, կասի. - Դե՛, երիտասարդ. իմ քյթի ճյուր քյո լեզվով սրպի:

Կսրպի:

Կտանի ուր տուն, կասի. - Կնի՛կ, յաթաղ թալ մեր խալիվոր պիրիր եմ. վերցենք շախենք:

Խալիվրուն կպիրեն կշախեն: Քյանի էրթա խալիվրու յարեքյ կխուրընթանա: Ինոնց էլ թաժա լաճմ էլե:

Երիտասարդ էն մեկ օր կասի. - Խալիվո՛ր պապիկ, տյու ճեռչ մարթ ես, շատ երկիր ես պտտե, ասա խեմ քյո յարեհդերաց դեղ դարման ի՞նչ ի:

Կասի. - Իմ յարեհդերաց դեղ. թաժա լաճու արունն է, որ քսեն իմ յարեհդերաց վերեն՝ կժրի:

Երիտասարդի կասի. - Իմ կնիկ խապեմ՝ ճամխեմ ճրհու. տղեն պիրեմ մորթեմ:

Կէլնի կնիյ կճամխի ճրհու. տղեն կպիրի մորթի, արուն կքյսի խալիվրուն, խալիվոր կէլնի քյսան տարեկան երիտասարդ:

Սորա տղի ջանդակ գյլեոխ կտանի դնի ուրուրոց: Կնիյ կուգյա: Ճյուր կուտա խալիվրուն, կասի. - Մա՛րթ, էսա մեր պապիկ ժրե էլե երիտասարդ, էսա ի՞նչ դարման արիր:

Կասի. - Կնի՛կ, քյեզնից պախեմ, աստծուց ի՞նչ պախեմ, մեր տղեն մորթեր եմ, արուն քսեր եմ խալիվրու մարմին, խալիվոր ժրավ: Կնա տղեն փանթյուրի, վերցենքյ տանենքյ խորենքյ:

Կնիյ կասի. - Քյո՛ վիզ կոտրի, տյու թո զի ասիր. ես ոտկեր պոնի, տյու ծեռքյեր պոնիր, տղեն մորթինքյ վանքմ էլ զիկ էլներ:

Կնիյն ի կէրթա տեխ տղեն, որ փաթյուրի, վերցեն: Կտիսնա, որ տղեն փթթե, ժրե. կարմրցե մեչ ուրուրոցին, կծողա:

Կբոոա իրկան, կասի. - Արե՛, տե, տղեն ժրե:

Զուր ինոնքյ կէրթան տղի հավարին, խալիվոր ինքյ ուր կասի՝ Պիտի իմնան ես խրիշտակ եմ: Կոխնի ինոնց, կթոնի:

Խեր մեր կտանոնան կուգյանն, կասեն. - Էրթանքյ, խալիվորն խրեշտակ ի:

Տիսնան խալիվոր թոե:

Աստծու օխնենք կխասնի ինոնց, ինոնքյ կուտեն կխմեն, չում խարիր տարի:

Աստծուց իրեքյ խնձոր էճնվ: